ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 10
ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 41. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018~~7~~ թվականի հուլիսի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 33-36-րդ, 38-րդ և 50-րդ հոդվածների: 33-36-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2019 թվականի մայիսի 1-ից, իսկ 38-րդ և 50-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:
2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ուժը կորցրած ճանաչել «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 4-ի N ՀՕ-272 օրենքը, բացառությամբ 9-րդ և 10-րդ հոդվածների:
3. «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 4-ի N ՀՕ-272 օրենքի 9-րդ և 10-րդ հոդվածներն ուժը կորցրած են ճանաչվում սույն օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող 60-րդ օրը:
4. 2019 թվականի փետրվարի 1-ից ուժը կորցրած ճանաչել «Դատական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի հուլիսի 7-ի N ՀՕ-159-Ն օրենքը, «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2009 թվականի հունիսի 11-ի N ՀՕ-158-Ն օրենքը, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի մայիսի 19-ի N ՀՕ-26-Ն օրենքը, «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 նոյեմբերի 28-ի N ՀՕ-286-Ն օրենքը: